«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Գարեգին Նժդեհի գաղափարախոսական ժառանգությունը և ցեղակրոն շարժումը: Թեմայի դասավանդման առանձնահատկությունները:**

ԱՌԱՐԿԱ **Պատմություն**

ՀԵՂԻՆԱԿ **Անահիտ Գասպարյան**

ՄԱՐԶ **Արագածոտն**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ **Սադունցի Ս. Մուրադովի անվան հիմնական դպրոց**

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ1Գարեգին Նժդեհի կյանքն ու գործունեությունը 6

1.1 Ո՞վ է Նժդեհը 6

1.2 Նժդեհն իր պաշտած ժողովրդի ռազմական և իմացական կորովի փայլուն մարմնացումն էր 8

Գլուխ 2 ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ 10

2.1 Ի՞նչ է Ցեղակրոնությունը 10

Գլուխ 3 Թեմայի դասավանդման առանձնահատկությունները 12

Եզրակացություն 18

Գրականության ցանկ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ժողովուրդ իր պատմության ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանում, ծնում է մեծերի, որոնք էլ դառնում են նրա խորհրդանիշ կերպարները՝ հետագա սերունդներին ուղեկցելով և հզորություն հաղորդելով դժվարին իրադրություններում: Այս միտքը առավել քան տեղին է հնչում Գարեգին Նժդեհի պարագայում, ով ոչ միայն դարձավ մեր պատմության խոշորագույն դեմքերից մեկը, այլև հետագա սերունդների հիշողության մեջ մարմնավորեց հայ ցեղի ոգին: Հայոց համար Գարեգին Նժդեհը եզակի, բացառիկ մեծություն է:

Դյուրին չէ ասել, թե ո՞վ է մեզ համար Գարեգին Նժդեհը, «հին հեքիաթների դարի հերոս» և գաղափարակիր զորավար, որը քաջահմուտ լինելով ռազմարվեստի գաղտնիքների մեջ իր վարած բազմաթիվ ճակատամարտերում գրեթե չի կրել պարտություն, շրջահայաց քաղաքագետ, որը ունեցել է իր անփոփոխ հավատո հանգանակը - բայց քայլել է ժամանակին համահունչ, նվիրյալ ազգային գործիչ, որի գործունեությունը իր կենդանության ժամանակ, ոչ էլ մահվանից հետո չի արժանացել միանշանակ գնահատականների, մարգարե որը գիտի նզովել և դափնեպսակել կանխագուշակել իր ազգի ճակատագիրը, Առաջնորդ, ով աստվածաշնչյան Մովսեսի պես կարող է իր ազգին առաջնորդել Անապատի մաքրագործվելու, ազատվելու ստրկության բարդույթից, Ուսուցիչ, որը ստեղծում Անապատից դուրս գալու վարդապետությունը հռետոր և մտածող, որի խոսքերը եղել են «վառվող կերոններ» գաղափարները հրդեհել են մարդկանց սրտերը», մտքերը եղել են «պայթուցիկներ» թմբիրի մեջ գտնվող մարդկանց համար, պատմաբան, որը մտքով և սրտով տեսնում է պատմության տեսանելի և անտեսանելի օրենքները, մարդագետ, որը օժտված լինելով նուրբ ինտուիցիայով կարողանում է թափանցել մարդկային ոգու բնության և հոգեբանության ներքին ծալքերը, բարոյախոս ով իր ազգի համար մշակեց և ներազգային բարոյականով ապրելու կատեգորիկ հրամայականը իմաստուն և փիլիսոփա, որի համար փիլիսոփայությունը սոսկ տեսություն չէ, այլ ավելի շուտ իմաստություն և ապրելակերպ կյանքի գործ, կենսագործունեության յուրօրինակ ձև: Անշուշտ, հեշտ է ասել որ թվարկած և չթվարկած ԵՍ- երը ընդհանուր առմամբ բնութագրում են Նժդեհին, որ նա այդ ամենն ամփոփում է իր մեջ: Իսկ որն է մոգական ուժը ոգին, որը վճռական դեր է խաղացել Նժդեհի կյանքում, նրա անհատականության կայացման գործում:

Ավետիս Ահարոնյանին տրված բնութագրումների ինչպես նաև Նժդեհի իմաստասիրական մտածումների գործերի, ինքնագնահատումների վերլուծությունից կարող ենք եզրահանգել, որ Հայ Մտածումի, զգացմունքի և կամքի բոլոր հանգրվաններում Նժդեհին առաջնորդել է Ազգի Ոգին, Ցեղի Շունչը այն աներևույթ Ուժը, Ճակատագիրը, որին հանդիպելուց հետո նա

այլևս չկարողացավ նրանից բաժանվել: «Ազգային ոգի — ահա գերազոյն հերոսը միակը մեր պատմության անիվը դարձնել, մեր հավաքական ճակատագիրը վարող հերոսը: Էապես միայն դա է գործում պատմութեան մէջ եւ պատմութեան համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն անձնաւորողներն այդ ոգու»[1]: Այդ ոգին ընտրել էր Նժդեհին, որպեսզի ինքն իրեն կարողանա լիովին դրսևորի որպես միտք, զգացմունք եվ կամք, որպեսզի նրան դարձնի Հայ մտքի. Զգացմունքի և Կամքի արտահայտիչներից մեկը:

Նժդեհը, բնավ էլ տրոհված ԵՍ-երի ամբողջություն չէ, այլ միակենտրոն միասիրտ, միակամ և միախոհ անհատականություն: Նա ոչ թե ներհակ, այլ ներդաշնակ էություն է: Նրա դիմապատկերի տարբեր կողմերը՝ Զորավարը, Առաջնորդը, Մարգարեն Իմաստասերը, Մարդագետը և այլն, ոչ թե շարադրված են իրար կողք կողքի այլ միահյուսված և միակցված են իրար այնպես, ինչպես շրջանագիծ կազմող կետերը: Ազգի ոգին բացահայտող միտքը, զգացմունքը և կամքը նրա մեջ միշտ եղել են միաձույլ թեև երբեմն նայած տեղին ու ժամանակին դրանցից մեկը կատարել է առաջատարի կամ ղեկավարի գործառութ: «Սուրը թե գրի՞չը - թե մեկը, թե մյուսը – Ես սիրեցի ու գործածեցի երկուսն էլ»[2]: Այդ աստվածային զենքերից նա սկզբում նախընտրեց սուրը, որովհետն ժամանակներն այնպիսին էին, որ «գրիչը, խոսքը, ճշմարտութիւն, իրենց ճամբան հարթելու համար կարիք են զգում սրի»[3]: Բայց երբ եկավ Գրչի ժամանակը, նա դա գործածեց որպես Սուր: Սուրը կատարեց այն, ինչ հետո գրիչը պետք է գրեր և պատմեր: Այս առումով խորհրդանշական է նրա սյունեցի զինակիցների խոսքը «Երբ մեռնես գլխիդ տակ կդնենք սուրդ և կքանդակենք գերեզմաժայռիդ վրայ Այստեղ հանգչում է նա, որ գործեց իբրեւ կենդանի սուր»[4]: Իսկապես նա անզոգական երևույթ է իբրև կենդանի սուր». Նրա գործը միտքը խոսքը սրի պես հատու, կտրուկ ու ազդու էին: Ինչպես առաջնորդ ու զորավար Նժդեհը միշտ գործել է այնպես ինչպես մտածել է իբրև իմաստասեր, զգացել իբրև հոգեբան և ավետել իբրև մարգարե:

Նժդեհը մեծ Զորավար ու Առաջնորդ էր, իսկ մեծ մտածող էր, որովհետև ուներ մեծ հոգի, հոգու մեծություն ու վեհություն, որը բնորոշ է միայն մեծ մարդկանց: Նրանում Զորավարը - մարդասերը և Մարդագետը կազմում են մի անտրոհելի ամբողջություն, որի սնուցիչը , արյունը մարդկային ազնվատոհմիկ և ազգաշունչ բարոյականանությունն է: Վերջինս ներծծված է նրա մտածումների զգացումների և գործերի մեջ: Ուստի առանց չափազանցության կարող ենք պնդել, որ Նժդեհի թե գործունեությունը և թե փիլիսոփայությունն ունեն ընդգծված բարոյապաշտական բովանդակություն: Իր ստեղծագործություններում նա քննարկում է այնպիսի հարցեր, որոնք պահանջում են բարոյագիտական մոտեցումներ:

Եվ իսկապես Գարեգին Նժդեհը հայոց պատմության մեջ այն եզակի կերպարներից է

ով ոչ միայն սիրվեց հայ ժողովրդի կողմից դեռևս իր կենդանության օրոք այլև մինչ օրս էլ հիշվում և ապրում է հայության սրտում: Եվ մենք վստահ ենք նրանում, որ Նժդեհ անունը կմնա հայության մեջ ընդմիշտ և երբեք չի մոռացվի:

Թեմայի արդիականությունը: Ուսումնասիրվող թեման արդիական է նրանով, որ Գարեգին Նժդեհի մասին կան շատ հակասական կարծիքներ: Այդ կարծիքները հաճախ չափազանցված են և չեն համապատասխանում իրականությանը: Թվում է, թե ամեն ինչ բացահայտված է Գարեգին Նժդեհի մասին, սակայն դա այդպես չէ՝ իր ստեղծագործություններից պարզ երևում է, որ նրա մասին ոչ ամեն ինչ է բացահայտված: Գարեգին Նժդեհը հակասական է նաև այն պատճառով, որ իր աշխատություններում և հոդվածներում տեղ են գտել այնպիսի մտքեր, որոնք ընթերցողի համար այնքան էլ պարզ և հանրամատչելի չեն և հաճախ հակասությունների տեղիք են տալիս: Բացի այդ շատերը Նժդեհին գիտեն որպես ռազմական, քաղաքական գործիչ, մեծ սպարապետ, բայց շատ քչերն են ծանոթ նրա գաղափարախոսությանն ու նրա առանձնահատկություններին: Այդ իսկ պատճառով մենք փորձել են անդրադառնալ Նժդեհի կերպարին և նրան ներկայացնել որպես գաղափարախոս և փիլիսոփա:

Հետազոտության նպատակը, խնդիրները և մեթոդները: Հետազատական աշխատանքի նպատակն է բացահայտել Գարեգին Նժդեհի տեղն ու դերը հայոց գաղափարախոսության զարգացման գործում: Մարդկությանը հայտնի դարձնել, որ Նժդեհի բազմաբովանդակ կերպարը մուտք է գործել ոչ միայն ռազմական և քաղաքական, այլ նաև գաղափարաբանության պատմության մեջ և այլն՝ կրել է համամարդկային նշանակություն: Աշխատանքի նպատակներից է ապացուցել իր գաղափարների և ցեղակրոն շարժման շուրջ ծագած հակասական կարծիքների անճշգրտությունները և կեղծ լինելը:

Հետազոտական աշխատանքը գրելիս մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

✓Ներկայացնել Նժդեհին որպես գաղափարախոս:

✓Բացահայտել թե Գարեգին Նժդեհի գաղափարները արդյոք արդիական են թե ոչ:

✓Քննել թե Ինչ՞ու է Ցեղկարոնությունը դիտարկվել որպես հակաքրիստոնեական գաղափարախոսություն և ապացուցել որ դա չի համապատասխանում իրականությանը:

✓ Վերհանել Ցեղակրոն շարժման հիմքերը զուգորդմամբ:

[1] https://lernci.livejournal.com/13175.html (10.10.21):

[2] Նժդեհ Գ., Հատընտիր, Երևան 2001, էջ 252:

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 253:

ԳԼՈՒԽ 1
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ. ԿՅԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց պատմության ալեծուփ օվկիանում, մեր
նվիրական հերոսների շարքում, իբրեւ
գաղափարական եւ կազմակերպական առաջնորդ, վեր
է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը:

1.1 Ով է Նժդեհը

Գարեգին Նժդեհը հայոց պատմության փառահեղ զորավարն է, նա յուրաքանչյուր հայի մեջ մնաց որպես անհաղթ, անպարտելի ու փառավոր զորավար, ով իր ամբողջ կյանքը նվիրեց հայությանը՝ նրա բարօրությանն ու հզորությանը:

Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր ռազմաքաղաքական գործիչ, զորավար ու փիլիսոփա, իրավաբան Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է Երևանի նահանգի Նախիջևանի գավառի Կզնուտ գյուղում 1886 թ. (իր վկայությամբ) քահանայի ընտանիքում: Նա 1907 թ. անդամագրվել է Դաշնակցական կուսակցությանը:

Հեղափոխական-ազատագրական պայքարի մկրտություն է ստանում Պարսկաստանում, որտեղ հայերը Եփրեմ Խանի գլխավորությամբ մասնակցել են շահական իշխանության դեմ Պարսկաստանի Ժողովրդական–սահմանադրական շարժմանը: Պարսկաստանից 1908 թ. գրված նամակում առաջին անգամ հանդիպում է Գարեգին Տեր-Հարությունյանի Նժդեհ (պանդուխտ, օտարական) մականունը:

Առաջին աշխարհամարտի ժամանակ նա եղել է հայկական երկրորդ կամավորական ջոկատի փոխհրամանատար: 1915 թ. մայիսին մասնակցում է Վանի ժամանակավոր ազատագրմանը:

Գարեգին Նժդեհի հրամանատարական ունակությունները հատկապես դրսևորվեցին 1918 թ. մայիսին տեղի ունեցած Ղարաքիլիսայի ճակատամարտում, երբ իր ոգեշունչ ելույթով դիմելով մարտիկներին՝ նրանց գրոհի տարավ ռազմաճակատի ձախ թևում՝ ջախջախիչ պարտության մատնելով թուրքերին:

1919 թ. աշնանը Գ. Նժդեհը նշանակվում է պետական պաշտոնում՝ որպես գավառապետ: Սակայն շուտով վերջինս ստանում է նոր կուսակցական-պետական առաջադրանք: Նրան վստահվում է Կապարգողթի (Կապան, Արևիք, Գողթան) շրջանի պաշտպանությունը, ուր նա մեկնել է 1919 թ. կեսերին: Նժդեհը փաստորեն հանդիսանում է

ամբողջ Զանգեզուրի (Սյունիքի) ինքնապաշտպանության կազմակերպիչ ու ղեկավար՝ ցուցաբերելով զորավարական տաղանդ և պետական գործչի բարձր կարողություններ: Գարեգին Նժդեհի կազմակերպած հերոսական պաշտպանության շնորհիվ ձախողվեցին Թուրքիայի և Մուսավաթական Ադրբեջանի քաղաքականությունն անփոփոխ ժառանգած Խորհրդային Ադրբեջանի՝ Զանգեզուրն Ադրբեջանին բռնակցելու ձգտումները:

Նժդեհը թողել է հարուստ գրավոր ժառանգություն՝ գիտական աշխատություններ, հուշեր-հոդվածներ, հրամաններ, կոչեր, դիմումներ, նամակներ:

Նա նաև ակտիվ մասնակցություն է ունենում Առաջին Հանրապետության ստեղծման գործընթացին: Այսպիսով՝ Գարեգին Նժդեհի գործունեությունը չի սահմանափակվում միայն իր ռազմաքաղաքական գործունեությամբ: Նա ակտիվ մասնակցություն է ունենում Հայաստանի առաջին հանրապետության պետականաշինության գործընթացին: Ինչպես պրակտիկ գործունեության ընթացքում, այնպես էլ գիտական աշխատություններում արտահայտվել են նրա առաջադիմական հայացքները պետության և իրավունքի մասին[5]:

1.2 Նժդեհն իր պաշտած ժողովրդի ռազմական և իմացական կորովի փայլուն մարմնացումն էր:

Անչափ կարևոր է ինքնիշխան Հայասատանի Հանրապետությունում Նժդեհ պետական և ռազմական գործչի հիշատակի ոգեկոչումը: Նրա կյանքն ու գործն այլևս հավերժորեն անբաժան են Հայոց պատմությունից, մեր նորօրյա և գալիք պայքարից: Ինքը, մեծ ռահվիրան Գարեգին Նժդեհը, պատգամում էր, որ «Պատմությունը – դա անավարտ վեպ չէ, այլ չավարտված Ճակատամարտ»:

Դեռ գիմնազիստ էր Նժդեհը երբ զինվորագրվեց մի բացառիկ նվիրական գաղափարի՝ հայությունը կրկին դարձնել պետություն և պատմություն կերտող ազգ: Ավելի ուշ բանաձևում էր, որ Հայկական պետությունն ուղղակի պարտադրված է իրար շաղկապել Մամիկոնյան ռազմունակությունը և Բագրատունյաց կուլտուրական ոգին:

Նա անմնացորդ ու անձնվիրաբար ծառայեց և հայ զենքին և հայ մշակույթին: Նրա մեջ զենքի ու նվիրագործված գաղափարի հազվագյուտ ներդաշնակություն կա: Գ. Նժդեհ Զորավարը, պետական գործիչը և մտածողը այս հրաշալի եռամիասնությունը, կարողացել են զարմանալիորեն մեկտեղվել մեկ անհատականությունում և գործել ուժգին և նպատակասլաց:

Գ. Նժդեհի դավանանքի աներեր սյուներն էին ժողովուրդը և Հայրենիքը որոնց առաջ

որդիական անկեղծ խոնարհում, ակնածանք ուներ: Դրանք իր անզիջում պայքարի մղիչ ազդակներն էին որոնց կրկին ծառայեց պարզ զինվորի անխառն գիտակցումով:

Նա ծնվեց մի ժամանակ, երբ հրամայական էր ապացուցել, որ հայն էլ անձնազոհ ու արիադավան ռազմիկ կարող է լինել: Եվ ինքնամոռաց մաքառեց ուխտյալների փաղանգում, որի զարդն ու պսակը եղավ նրա վարած Սյունյաց դյուցազնամարտը: Գ. Նժդեհը Մեր ժողովրդի կուռ միասնականության, ազգային առողջ արժեքների շուրջ համախմբվելու, հզոր ու բարգավաճ հայրենիք կերտելու գաղափարների խորհրդանիշն է[6]:

Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին, Նախիջեւանի գավառի Կզնութ գյուղում: Մանուկ հասակում կորցրել է հորը (հայրը՝ Եղիշեն, գյուղի քահանան էր) եւ մնացել մոր՝ Տիրուհու խնամքին: Ընտանիքում եղել են չորս երեխա (ուներ մեկ եղբայր, երկու քույր), ինքը փոքրն էր[19]: Նժդեհի ցեղը 1829-1830թթ գաղթել էր Պարսկահայքի Սալմաստ գավառի Ղըզլջայ (Կիզիլճայ) գյուղից: Նժդեհի հայրական տունը գտնվում էր Կզնութի Ս. Աստվածածին եկեղեցուց քիչ հեռու: Նժդեհը շատ ընթերցասեր էր[7]:

Սկզբնական կրթությունը ստացել է Նախիջեւան քաղաքի ռուսական դպրոցում, ապա՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ, 17 տարեկան հասակից, միացել է հայ ազատագրական շարժմանը: Այնուհետեւ անցել է Պետերբուրգ եւ երկու տարի տեղի համալսարանի իրավաբանական բաժնում սովորելով՝ լքել է համալսարանն ու ամբողջովին նվիրվել հայ հեղափոխության գործին՝ ցարիզմի ու սուլթանականության դեմ: 1906թ. անցնում է Բուլղարիա, ուր Ռոստոմի աջակցությամբ եւ մակեդոնական ազատագրակա ն շարժման ղեկավարների միջնորդությամբ ընդունվում է Սոֆիայի սպայական դպրոցը եւ այն հաջողությամբ ավարտելով՝ 1907թ. վերադառնում է Կովկաս:

1907-1908թթ. մտնում է Հ.Յ.Դ. շարքերը եւ, իբրեւ կուսակցական նշանավոր գործիչ Սամսոն Թադեւոսյանի օգնական, մասնակցություն բերում պարսկական հեղափոխական շարժմանը: Զենք եւ ռազմամթերք տեղափոխելու համար Նժդեհը 1909թ. վերադառնում է Կովկաս եւ ձերբակալվում ցարական իշխանությունների կողմից: Բանտերում՝ Ջուլֆայից մինչեւ Պետերբուրգ, մնացել է ավելի քան երեք տարի, ապա՝ անցել Բուլղարիա[8]:

1

5Ալեքսանյան Ա., Գարեգին Նժդեհի քաղաքական իրավական հայացքները, Երևան, 2019, էջ

6 Գարեգին Նժդեհի գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2001, էջ3-4:

ԳԼՈՒԽ 2

ՑԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Ինչ է Ցեղակրոնությունը

«Ցեղակրոնությու՛ն-ահա՛ համադարմանը, առանց որի հայությունը կմնա մարդկության քաղաքականապես ամենատնանկ մասը»

Քաղաքական վայրկյան, որ ապրում է հայությունը պատմական է և գերագույն: Այդ գիտակցությունը խռովքի է մատնել մեզ: Ի՞նչ է պատրաստում մոտիկ ապագան մեզ: Այդ հարցին պատասխանեք մեկ այլ հարցով, թե զորության ի՞նչ կարողություններ կան թաքնված մեր ցեղի էության մեջ: Իսկ այդ հարցին կարող է պատասխանել միայն ցեղաճանաչը: Առանց ցեղային ինքնաճանաչման անկարելի է զերծ մնալ սեփական ուժերը ստորագնահատելու և գերագնահատելու աղետալի սխալներից: Ժողովուրդների անզորության և դժբախտության ամենաներգործուն պատճառը իր սեփական էության մասին ունեցած տգիտություն է, անցեղաճանաչությունը: Մերօրյա հայությունը ծանոթ չէ այն հոգեբանական օրենքներին, որ ժողովուրդների զարթնումն են կառավարում, այդ իսկ պատճառով նա չի աճում հոգևորապես: Նա դեռ չի սրբել իր աչքերըմ իր հոգու միջոցով աշխարհը, իրերը և իր սեփական ուժերը անսխալ կերպով տեսնելու համար: Նա դեռ չգիտի չափն իր հոգևոր զորութենականության, նա չի զգում իր զորութենական կարողությունները[12]: Ինքնաճանաչ չէ մերօրյա հայը:

Նրա համար հայոց պատմությունը անզօրության և պարտության, կոտորածների ու տեղահանությունների տխուր նկարագրությունն է:

Ահա թե ինչու պետք է խորացնել մեր պատմական հիշողությունը՝ վերապրելով մեր ցեղի կտրած-անցած պատմական ողջ ճամփան: Պատմագիտական լույսի տակ պետք է դնել մեր ցեղի գոյության և կյանքի ծանրակշիռ խնդիրները, որոնց անսխալ լուծումից է կախված մեր լինել-չլինելը: Հետևաբար դառնալ ցեղաճանաչ:[13]

Ահա այստեղ տեղին է Նժդեհի հետևյալ խոսքը պատմության վերաբերյալ. «Հաճախ կաշառվում են պատմաբանները, պատմությունը՝ երբեք»[14]:

Ցեղաճանաչողությունից զուրկ ժողովուրդը իր նոր սերնդին կտա սխալ դաստիարակություն, կունենա սխալ քաղաքականություն և սխալ ռազմավարությունը: Հայոց ցեղայնությանը անծանոթ մանկավարժը, զորավարը և քաղաքական գործիչը կարող

---

7 Գարեգին Նժդեհ 115 գիտաժողովների նյութեր, Երևան 2001, էջ 68-69:
8 Պետրոսյան Ա., Գարեգին Նժդեհը և քրիստոնեությունը, Երևան 2001,էջ 9:

են գործել կուրորեն, առանց գիտական հիմունքի[15]:

Ահա սա մեկ պատճառ, որ ստիպեց Նժդեհին ստեղծել Ցեղակրոն շարժումը: Ցեղակրոնություն ասել է ցեղաճանաչություն, ջերմաջերմ պաշտամունք դեպի ցեղի փառահեղ անցյալը, ապա ստեղծագործ հավատ դեպի ցեղի մեծ ապագան: Եվ պատահական չէ Նժդեհի ուղղված խոսքը հայ նոր սերնդին և, ինչու չէ, նաև մեզ.

«Ահա՛ թե ինչու՛ կանգնած վաղվա սեմին՝ մեր անմեռ ցեղի մեծ ապագայի հավատքով ես իմ խռովիչ կանչն եմ ուղղում օտար աշխարհներում ցրված մեր նորահաս սերունդին -Եղի՛ր արթուն, արթու՛ն ցեղորեն:
Եղի՛ր ցեղակրոն»:

12 Նժդեհ Գ., Ցեղակրոնություն, Երևան 2020, էջ 13-14:

13 Նույն տեղում, էջ 15:

14 https://www.internest.am (10.10.21թ):

15 Նժդեհ Գ., Ցեղակրոնություն, էջ15-16:

ԳԼՈՒԽ 3. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսօր, երբ կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգից ուսուցման եռակենտրոն համակարգի (գիտելիքներ (կարողություններ հմտություններ,) արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել,

առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները: Փաստորեն, այսպես կոչված նոր մեթոդները նոր խնդիրների լուծմանը ծառայող մանկավարժական զինանոցում արդեն եղած մեթոդներն են, որոնք ստանում են նոր իմաստ, երանգ ու շեշտադրում: «Ուսուցման մեթոդը» բարդ և բազմակողմանի հասկացություն է: Առաջին հերթին դա պայմանավորված է հենց ուսուցման գործընթացի բարդությամբ: Վերջինս իր մեջ ներառում է երեք կարևոր խնդիր՝ ի՞նչ սովորեցնել(կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել(կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցել(ուսուցման մեթոդիկա): Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակները իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ: Հանդիսանալով ուսուցման գործընթացի միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման՝ նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը: Այսպիսով, ուսուցման գործընթացում մեթոդը ունի կապող օղակի բարդ և առանձանահատուկ դեր: Ի՞նչ է մեթոդը: Մեթոդը հունարեն բառ է, որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Այստեղ չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողություն:[16]

Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը:

16. Ղուկասյան Ա., Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013, էջ 21:

Ուսուցչի մեթոդական կոմպետենտությունը ուսուցման գործընթացի արդյունավետությունը ապահովող կարևոր ուղիներից մեկն է: Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ: Դրանց մի մասը հաջողությամբ բռնել են ժամանակի քննությունը, ավանդաբար կիրառվել և կիրառվելու են:

Բնական է, որ ուսուցիչը միանգամից մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է յուրաքանչյուր որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դիդակտիկական այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում: Մանկավարժական գրականության մեջ առանձնացված են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ՝

1. ուսուցման նպատակներն ու խնդիրները

2. բովանդակությունը

3. ուսուցանվող նյութի ծավալն ու բարդության աստիճանը

4. սովորողների իմացական մակարդակը

5. սովորողների դրական կամ բացասական դիրքորոշումը

6. սովորողների տարիքային առանձնահատկություններն ու աշխատունակությունը 7. նյութի յուրացմանը հատկացվող ժամաքանակը

8. ուսուցման նյութատեխնիկական և կազմակերպական պայմանները 9. մինչ այդ կիրառված մեթոդները

10. դասի տեսակներն ու ձևերը

11. սուբյեկտ-օբյեկտ և սուբյեկտ-սուբյեկտ ձոխհարաբերությունները

12. դասարանի կազմը

13. ուսուցչի մասնագիտական գործիմացությունը[17]:

Հաշվի առնելով ուսուցման մեթոդի ընտրության վրա ազդող թվարկված գործոնները, պատմաբան-ուսուցիչը պետք է դիտարկի առկա փաստերը, նախագծելով դրանց կանխատեսելի և անկանխատեսելի զարգացումներն ու հետևանքները:

Ընտրված յուրաքանչյուր մեթոդ պատմաբան-ուսուցչի մտածողության ելակետային ընթացակարգն է: Դասագործընթացում հաջորդականությամբ իրականացվող այս կամ այն մեթոդը ենթադրում է փաստերի ամբողջական հետազոտում՝ դրանց պատմական ժամանակին և տարաբնույթ զարգացումներին զուգընթաց: Այսպիսով, նոր, փոխներգործուն մեթոդների լայնածավալ կիրառումն ու մեթոդական ճկուն համակարգի ստեղծումը, որը ներառում է ժամանակակից տեխնոլոգիական մոտեցումներ և հնարավորություններ, չափազանց կարևոր է և անհրաժեշտ: Ակներև է, որ պատմաբան-ուսուցչի առջև ծառացած առավել հրատապ խնդիրներից է ուսումնական գործընթացի նպատակային կառուցարկումը և այդ գործընթացում ուսուցման այնպիսի մեթոդների ընտրությունը, որոնք պետք է կրեն գիտականորեն հիմնավորված բնույթ: Ստորև կվերլուծենք ուսուցման փոխներգործուն այնպիսի մեթոդներ, որոնք պատմաբան-ուսուցիչը կարող է կիրառել Նժդեհի փիլիսոփայական համակարգը և Ցեղակրոն շարժումը ավելի մատչելի և հասկանալի բացատրելիս: Ստորև ներկայացնում ենք այնպիսի մեթոդներ, որոնք կարելի է կիրառել տվյալ թեմայի դասավանդման ընթացքում.

«Մտքերի տարափը» կամ «մտագրոհը» սովորողների աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդներից է:

Դրա գլխավոր գործառույթը մտքերի վերարտադրումն է: Այս մեթոդը մտքերի տարափ են անվանում, քանի որ խրախուսվում է հաճախ պարզապես ուսումնասիրվող նյութի հետ այս կամ այն կերպ առնչվող բառեր թվարկելն ու գաղափարներ արտահայտելը.

Պատմության դասավանդման գործընթացի արդյունավետ իրացման նպատակով, պատեհ ենք համարում նաև «Պրիզմա» ակտիվ մեթոդի կիրառումը: Այս մեթոդը նպաստում է սովորողների ազատ և անկաշկանդ մտածողության զարգացմանը: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող պատմական երևույթի, փաստի, հասկացության, իրադարձության կամ գաղափարի վերաբերյալ սովորողների ենթագիտակցության մեջ առկա ասոցիատիվ կապերի արձանագրումն ու բացահայտումն է:

Ունենալով իրադարձությունների սկիզբը և ավարտը, աշակերտը լրացնում է աղյուսակը, տալով իրադարձությունների շարքի հանգամանալի վերլուծությունը, ինչն էլ հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտի գիտելիքներն ու հմտությունները, ինչպես նաև ինքնուրույն ճանաչողական գործունեությունը:

[17] Պապոյան Հ., պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան 2013, էջ 25:

Տվյալ թեմայի դասավանդման ընթացքում առավել նպատակահարմար է կիրառել նաև T-աձև աղյուսակ մեթոդը: T-աձև աղյուսակ, օգտագործվում է միևնույն հասկացության կամ խնդրի երկու կողմերը համեմատելու համար:

Պիտանի է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ իրականացնելիս:

Ներկայացնենք Ցեղակրոն շարժման տարածման դրական և բացասական նշանակությունը՝ նշված աղյուսակի միջոցով.

Դրական նշանակություն	Բացասական նշանակություն
✓ հայ մնում է հայ	
✓ հայը հասկանում է իր էությունը	✓ Հհայը հասկանւում է իր ցեղի զորութենական ուժը
✓ Առաջնորդվում է ցեղային ազդակներով	
✓ Առաջնորդվում է ցեղային հատկանիշներով	
✓ Առաջնորդվում է ցեղային սկզբունքներով	
✓ Ուներ բացասական կարծիք	

✓ Որոշ մարդիկ սխալ են հասկանում ցեղակրոնության հիմնական էությունը և այն դարձնում հակաքրիստոնեական որևէ շարժում

Աշակերտներն իրենց տետրերում գրի են առնում նմանատիպ աղյուսակները, որոնք դասը սովորելու ժամանակ, օգնում են պատկերացնել պատմական որևէ գաղափարախոսության առանձնահատկությունները և օրինաչափությունները: Ժամանակի ընթացքում, աշակերտների մոտ ի հայտ են գալիս որոշակի հմտություններ, նրանք կարողանում են ինքնուրույն դատողություններ անել տվյալ գաղափարի վերաբերյալ, կարողանում են տալ որևէ պատմական գաղափարախոսության նշանակությունը և այլն: Զարգանում է նրանց ինքնուրույն ճանաչողական գործունեությունը, որը ենթադրում է դասընթացի ուսումնական նյութերի ամբողջական յուրացումը, որի շնորհիվ աշակերտները կարողանում են բացահայտել իմաստով ավարտուն մտքերը և դասընթացի հիմնական հասկացությունները[18]:

Առավել նպատակահարմար է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝«քեյս», «քառաբաժան աղյուսակ», Վեննի դիագրամ և այլ մեթոդները:

«Քեյս» մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ սովորողներին ընձեռվում է, որոշակի պատմական իրավիճակում հայտնվելու, այս կամ այն պատմական իրադարձության խաղարկման հնարավորություն, ինչի արդյունքում, նրանք կշռադատում և գիտակցում են դրանց նշանակալիությունն ու կարևորությունը,

ձևավորելով սեփական դիրքորոշումներ և համոզմունքներ խնդրո առարկայի վերաբերյալ: Այսպես օրինակ, առաջ է քաշվում տվյալ իրավիճակը. եթե դուք լինեիք տվյալ պատմական ժամանակաշրջանում, և լինեիք Նժդեհի փոխարեն ի՞նչ միջոցներ կձեռնարկեիք Ցեղակրոնություն կամ իր որևէ գաղափարների տարածման համար:

«Քառաբաժան» աղյուսակը հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել 4 բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին հետևաբար նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները:

Ի՞նչ գիտեի	ի՞նչ իմացա
ինչպե՞ս կարող եմ օգտագործել	ի՞նչ եզրակացություն արեցի

Վեննի դիագրամը նույնպես նպաստում է աշակերտների պատմական մտածողության զարգացմանը, այն հնարավորություն է տալիս գաղափարները միմյանց հակադրել կամ դրանց ընդհանրությունը ցույց տալ: Այսպես՝ կարող ենք համեմատել.

Պատմության դասավանդման ընթացքում կարևոր կրթադաստիարակչական դեր են կատարում պատմական խոշոր գործիչների դիմանկարների ցուցադրումը, որի հիմնական նպատակն է տեսողության միջոցով որոշակիացնել, ամրապնդել նրանց բնութագիրը[46]: Ուստի այս թեման ուսումնասիրելիս ուսուցիչը կարող է ցուցադրել տվյալ պատմական ժամանակաշրջանի համար կարևորագույն անձանց դիմանկարները:

18 Պապոյան Հ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 37:

Պատմության դասավանդման ընթացքում կարևոր դեր ունի նաև զննականությունը: Պատկերային զննականության մեջ զգալի դեր են կատարում ուսումնական նկարները: Նկարները պատկերացում են տալիս եզակի իրադարձությունների վերաբերյալ: Շատ հաճախ դրանք վերստեղծում են պատմության վճռական պահը, կամ պատմական որոշակի վայր: Դասի ժամանակ նկարը օգտագործվում է տարբեր նպատակներով որպես գիտելիքի ելակետային աղբյուր, պատումի նկարազարդում, ամրապնդման միջոց և այլն[149]: Գիտելիքների ստուգումն ու գնահատումը ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մասն է, որն իրականացվում է դասին և տանը աշակերտների ուսումնական գործունեության անընդհատ վերահսկողությամբ՝ բանավոր, գրավոր, գործնական առաջադրանքներ, նրանց աշխատանքին անմիջականորեն հետևելու միջոցով: Ստուգման և գնահատման օգնությամբ բացահայտվում են գիտելիքները, որոնք յուրացրել են աշակերտները,

ձեռքբերումներն ու բացթողումները, ուսուցչի աշխատանքի արդյունավետությունը: Գնահատումը տեղեկատվության հավաքումն է այն մասին, թե ուսումնառության ինչպիսի մակարդակի է հասել սովորողը: Այդ տեղեկատվությունը հավաքելու համար կարելի է օգտագործել գնահատման բազմաթիվ միջոցներ: Դրանք կարող են ներառել բազմաթիվ դիտարկումները, գրավոր թեստերը, տնային աշխատանքները, հետազոտական բնույթի աշխատանքները, նախագծերը, բանավոր հարցումները, և այլն:

Դրանց մեջ ուրույն տեղ ունեն գրավոր թեստերը, որոնք գիտելիքների ստուգման ժամանակակից արդյունավետ եղանակներից են:[19]

19 Պապոյան Հ., նշվ. աշխ., էջ 130:

Աշակերտների գիտելիքները ստուգելու համար շատ տարածված է հարցերի կամ հարցադրումների մեթոդը: Այս մեթոդը կարևոր միջոց է աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու և համակարգելու, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը զարգացնելու համար: Ուսուցչի կողմից ներկայացվող հարցերը պետք է լինեն. հստակ, հակիրճ,

տեղին ու ժամանակին, նպատակաուղղված: Բացի այդ հարցերը պետք է ունենան տրամաբանական հաջորդականություն, համապատասխանեն աշակերտների ունակություններին և մտածելու տեղիք տան:

Ինչպես օրինակ.

1. Ինչպե՞ս եք գնահատում Գ. Նժդեհի գաղափարախոսությունը:

2. Ի՞նչ կարծիք ունեք Նժդեհի գաղափարների տարածմանը օժանդակելուն ուղղված Դաշնակցության գործոնեության մասին:

Այսպիսի հարցերը կոչվում են բաց հարցեր, որոնք չեն ենթադրում միանշանակ պատասխաններ, այլ հնարավորություն են տալիս պատասխանի մեջ լինել ազատ:

3. Ե՞րբ է սկսվել Ցեղակրոն շարժումը:

4. Ե՞րբ է գումարվել Ցեղակրոն ուխտերի պատգամավորական ժողովը: Նմանատիպ հարցերը փակ հարցեր են, որոնք պահանջում են միանշանակ պատասխաններ:[20]

Այսպիսով, հարցերի մեթոդն ավելի մեծ խնդիր է լուծում, քան փաստերի բուն մտապահումը: Հարցերից ծնվում է երկխոսություն, որի ընթացքում սովորողը ծանոթանում է ընկերների արտահայտած մտքերի բազմազանության հետ, որն իր հերթին ընդլայնում է ողջ դասարանի բառապաշարը, հասկացությունների շրջանակը և մտքերը ստեղծագործաբար արտահայտելու նրանց կարողությունը: Սովորողները հասկանում են, որ հարցերի միջոցով իրենց գիտելիքները դառնում են արժեքավոր, քանի որ այդ գիտելիքները նրանք կարողանում են նպատակային ձևով համադրել, վերլուծել ու օգտագործել:

[20] Եփրիկյան Ա. Պատմության դասավանդման արդի մեթոդները և տեխնոլոգիաները, Ե. 2021:

Եզրակացություն

Սույն աշխատանքից կատարում ենք հետևյալ եզրահանգումները.

1. Գ. Նժդեհը ոչ միայն փայլուն զորահրամանատար էր, այլ նաև դիվանագետ, ռազմական արվեստի տեսաբան, նոր հայկական ռազմական արվեստի տեսաբան, նոր հայկական ռազմական հոգեբանության հիմնադիր, ինչպես նաև Մամիկոնյանների ուխտի վերականգնող և հայկական գաղափարախոսության հիմնադիր:

2. Անցնելով ռազմական գործողությունների բոհով, պատահական չէ, որ Նժդեհը իրեն համարում է ռազմական գործիչ: Համարելով իրեն ռազմական գործիչ, պատահական չէ, որ նաև այն հանգամանքը, որ Նժդեհը իր աշխատություններում անդրադառնում է ռազմական գործին, հաղթանակին հասնելու մեթոդների՛ն ռազմավարությանը:

3. Նժդեհը մեծանալով և դաստիարակվելով քահանայի ընտանիքում, իսկական քրիստոնյա է՝ իր մոտեցումներով և սկզբունքներով հանդերձ:

4. Նա քրիստոնյա է համարում նրան ում մեջ մի քիչ քրիստոսություն կա. Մի կայծ ամենազոր Աստվածամարդու հոգուց:

5. Լինելով քրիստոնյա պատահական չէ, որ Նժդեհը իր մասին այսպես է ասում. «Եղել եմ խոր հավատքի և էթիկայի մարդ և այդ պատճառով հաճախ դառնության բաժակ եմ դատարկել: Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղը հատկացրել եմ Աստծուն և հայրենիքիս»:

6. Նժդեհը ազգային նկարագրի ձևավորման գործում կարևորում է երկու բաղադրյալներ, առաջինը՝ բնակլիմայական պայմանները, աշխարհագրական դիրքը և տեղանքը և երկրորդ՝ պատմությունը:

7. Նժդեհի համար անընդունելի են սեփական ուժերի թե՛ թերագնահատումը և թե՛ գերագնահատումը:

8. Հայոց հոգեբարոյական նկարագրի նժդեհյան վերլուծության առանձնահատկություններից է այն, որ հարցը դիտարկում է երեք տեսանկյունից՝ անցյալ, ներկա և ապագա:

9. Ցեղակրոնությունը մի շարժում է, որ փորձեց միավորել և համախմբել հայությանը: Մի շարժում, որը Նժդեհը ստեղծեց հային ՀԱՅ պահելու և իր ինքնությունը չմոռանալու համար:

10. Անհիմն է այն կարծիքը, որ ցեղակրոնությունը սկիզբ առավ հայրենիքից դուրս: Այն ծնունդ է առել հայրենյաց լեռներում 1919-21թթ Դավիթբեկյան ուխտի տեսքով: **11.** Ցեղակրոնության էական և հիմնական մասը կազմում է պաշտամունքը ցեղի որակների, արժեքների և սրբությունների (հայրենապաշտություն, լեզվի պաշտամունք, զոհապաշտություն, նախնիապաշտություն, ուժապաշտություն,

առաջնորդապաշտություն):

12. Ցեղը, Ցեղակրոնությունն է մեր ապավենը:

13. Ցեղակրոնությունը ոչ մի կապ չունի ֆաշիզմի, առավել ևս նացիզմի հետ: Նրանց կապող միակ բանը այն է, որ երկու դեպքում էլ գերագույն արժեքը ցեղն է: **14.** Կեղծ է այն կարծիքը որ ցեղակրոնությունը հակաքրիստոնեական է, քանի որ ցեղակրոնություն կապ չունի կրոնի հետ: Ցեղակրոնությունը նշանակում է քո մեջ կրել ցեղը (Ցեղ+կրել+ություն):

15. Նժդեհը հայությանը բաժանում է երեք շերտերի՝ տատանվող կամ չկողմնորոշվող (ժողովուրդ) ազգայն-ցեղային (ցեղ), ամբոխացած- հակազգային (տականք): Յուրաքանչյուր հայ պետք է ընտրի դեպի ՑԵՂ տանող ճանապարհը: ՑԵՂԱՅՆԱՑԻՐ, ՑԵՂԱՅՆԱՑՈՒՐ:

Գրականություն

I. Նժդեհի աշխատությունները

1. Նժդեհ Գ., Ամերիկահայությունը ցեղը և իր տականքը, Սոֆիա 1935թ

2. Նժդեհ Գ. Հատընտիր, Երևան 2006թ.

3. Նժդեհ Գ. Հիշիր պատերազմը, Երևան 2020թ

4. Նժդեհ Գ. Ցեղակրոնություն, Երևան 2020թ

5. Նժդեհ Գ., Ցեղակրոն շարժում, Երևան 2006թ

II. Ուսումնասիրություններ

Հայերեն

1. Լալայան Մ. Ցեղակրոնություն քննական վերլուծություն, Երևան 1994թ 9. Լալայան Մ. Ցեղակրոնություն և տարոնականություն (պատմություն և գաղափարախոսություն), Երևան 2011

III. Գիտական հոդվածներ

1. Գարեգին Նժդեհ 115 գիտաժողովների նյութեր, Երևան 2001թ
2. Գարեգին Նժդեհի գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2001թ
3. Սարգսյան Ա. Ցեղակրոնության գնահատման հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարան թիվ 3, Երևան 2003թ
4. Սարգսյան Ա. Հայոց Ցեղասպանության պատճառն ու դասերը Գարեգին Նժդեհի և Հայկ Ասատրյանի մեկնաբանությամբ, Հայոց Մեծ Եղեռն 90 հոդվածների ժողովածու, Երևան 2005թ

IV. Մեթոդիկա

1. Եփրիկյան Ա. Պատմության դասավանդման արդի մեթոդներ տեխնոլոգիաները, Երևան 2021թ
2. Ղուկասյան Ա. Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2003թ
3. Պապոյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան 2013թ V. Կայքէջեր

1. https://www.internest.am (10.10.21թ)
2. https://www.internest.am (10.10.21թ)